կը նկարագրէ Մուղնեցիի արարքները, կը մեղադրէ Յակոբ կաթողիկոսը, որ «այս հերձուածող Մուղնեցւոյն Աչաց լոյս է գրեր», ու ծանր նզովքի տակ կը ձգէ Պարմախսուզ ու Տարաբխանաձի երէցները, որոնք, կ'ըսէ, «զսիւնոհոդոսն իմ կամէին խափանել. Աստուած խափանեսցէ զնոսա հոգով և մարմնով և որչափ ի մարմնի են՝ ի մէջ ալեաց փորձանաց կայցեն». կը բանադրէ նաև անոնց համախոհ չարերը։ Ապա կը յայտարարէ՝ թէ ինք ու բոլոր վարդապետները նորէն պիտի գրեն Յակոբ կաթողիկոսին. եթէ այս անգամ, կ'ըսէ, «չարեացն ետ զպատիժն եւ բարեացն աւրհնութիւն եւ եւս քաղաքիս մխիթարական թուղթ եւ աւրհնէք՝ նա՛ բարի, իմ մեծ եղբայրն է եւ աչաց լոյս. եւ եթէ կրկին յամառի եւ զչարսն գովէ՝ նա՛ յայտնի ամենեցունցդ լինի որ այսուհետեւ զթեմքն զամենայն ի վերայ Երուսաղէմի աթոռոյն կու կապեմք, որ անտի առնեն զսուրբ մեռոնն»(1)։

---

(1) Սիսի Թորոս կաթողիկոսի այս յայտարարութիւնը ամենազօրաւոր ու անժխտելի հերքում մըն է այն վարկածին, որով հանդուցեալ Տ. Բարգէն աթոռակից կաթողիկոս իր Պատմութիւն Կարողիկոսաց Կիլիկիոյ աշխատութեան մէջ (որ մամուլի տակ է տակաւին և որու տպագրուած պրակները առիթ ունեցանք տեսնելու), յենլով քանի մը յիշատակարաններու վրայ, տեղ տեղ ճիգ կ'ընէ հաստատելու թէ Կիլիկիոյ կաթողիկոսները էին միանգամայն Պատրիարք Երուսաղէմի։ Եթէ այդպէս եղած ըլլար՝ չատ բնական պիտի լինէր որ Թորոս կաթողիկոս յայտարարէր թէ այսուհետև Տաճկաստանի թեմերը ոչ թէ Երուսաղէմի՝ այլ Կիլիկիոյ աթոռին կը կապենք ու անկէ կ'առնենք միւռոնը։ Դիտենք պատմութենէն որ Ամենայն Հայոց հայրապետութեան աթոռը Կիլիկիայէն Էջմիածին փոխադրուելէն ասդին (1441) Երուսաղէմ բնաւ ենթարկուած չէ Սիսին ո՛չ հոգևորական և ոչ վարչական տեսակէտով։ Երուսաղէմի ու Կիլիկիոյ աթոռներուն միջև փոխանակուած մէկէ աւելի նամակները, զորս ունինք մեր ձեռքին տակ, երբեք այդպիսի կացութիւն մը չեն մատնանշեր։ Ընդհակառակը այդ